

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ.
ՏԵՂԵԿԱԳԻՐ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ա. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան. տեղեկագիր» պարբերականում (այսուհետ նաև՝ Տեղեկագիր) տպագրության ներկայացվող գիտական հոդվածների կազմման և ձևավորման հիմնական պահանջներն ու չափանիշները, ինչպես նաև դրանց հրապարակման պայմանները:

Բ. Տեղեկագրում հրապարակման ենթակա են միայն սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխանող գիտական հոդվածները:

Գ. Սույն կարգով առաջադրված պահանջներին և չափանիշներին չհամապատասխանելու դեպքում գիտական հոդվածը վերադարձվում է հեղինակին:

Դ. Հրապարակման կարող են ներկայացվել բացառապես այն գիտական հոդվածները, որոնք նախկինում երբևէ չեն տպագրվել:

Ե. Հոդվածը ներկայացվում է էլեկտրոնային տարբերակով՝ ուղարկելով Տեղեկագրի պաշտոնական կայքէջում նշված և/կամ գլխավոր խմբագրի էլեկտրոնային հասցեին¹:

Զ. Գիտական հոդվածը ենթակա է «կոյր» գրախոսության իրավագիտության ոլորտում գիտական աստիճան ունեցող անձի կողմից:

Է. Սույն կարգով սահմանված պահանջներին չհամապատասխանող հոդվածները ենթակա են վերադարձման: Խմբագրության կողմից նշված թերությունները չվերացնելու դեպքում հոդվածը ենթակա չէ տպագրության:

Ը. Ակադեմիական ազատությունը երաշխավորվում է:

2. ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ա. Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ MS Word տեքստային խմբագրիչով:

¹ armlaw@concourt.am, a.pkhrikyan@concourt.am

Հողվածի ընդհանուր ծավալը պետք է լինի ութից երեսուն էջի սահմաններում:

Բ. Հողվածին առաջադրվում են ներքոգրյալ տեխնիկական պահանջները.

- թղթի ձևաչափը՝ A4
- տառատեսակը՝ հայերեն GHEA Grapalat, անգլերեն և ռուսերեն՝ Sylfaen,
- տառաչափը՝ 12,
- միջտողային հեռավորությունը՝ 1,5,
- լուսանցքները՝ վերևից և ներքևից՝ 2 սմ, աջից՝ 1,5 սմ, ձախից՝ 3 սմ,
- էջադրումը՝ էջի ներքևում, կողմնորոշումը՝ կենտրոն,
- հողվածի տեքստում տողադարձեր չեն արվում:

Գ. Հողվածի սկզբնամասում նշվում են հեղինակ(ներ)ի անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ն ամբողջությամբ (գլխատառերով, թավ գրված): Նշվում են հեղինակներից յուրաքանչյուրի աշխատավայրի՝ ամբողջական անվանումը, հեղինակ(ներ)ի զբաղեցրած պաշտոնը, գիտական աստիճանը և (կամ) կոչումը, էլեկտրոնային հասցեն:

Դ. Ներքևում մեկ միջտողային հեռավորությամբ նշվում է հողվածի վերնագիրը (գլխատառերով, թավ գրված), ապա ամփոփագիրը (ներկայացվում է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով)՝ 150-250 բառի սահմաններում, որը պարունակում է հետազոտության առարկայի, նպատակի և հիմնական դրույթների վերաբերյալ ամփոփ տեղեկություն: Ամփոփագրին հաջորդում են հիմնաբառերը (ներկայացվում են հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով)՝ մինչև 7 բառ կամ բառակապակցություն:

Ե. Ամփոփագրից և հիմնաբառերից երկու միջտողային հեռավորություն ներքև ներկայացվում է հողվածի բնագիրը:

Հողվածի ներքին կառուցվածքին ներկայացվում են հետևյալ բովանդակային պահանջները.

ա/ ներածությունը պետք է պարունակի առնվազն հետազոտության արդիականության հիմնավորումը, նպատակի և խնդիրների ձևակերպումը,

բ/ բուն հետազոտությունը պետք է համապատասխանի հողվածի վերտառությանը և պարունակի առաջադրված խնդիրների վերաբերյալ վերլուծություններ և լուծումներ: Ցանկալի է բաժանված լինի համապատասխան գլուխների կամ բաժինների,

գ/ եզրակացությունը պետք է ներառի հետազոտության հիմնական արդյունքների համառոտագրում և ամփոփում:

Զ. Ենթատողային մեկնաբանությունները կամ հղումները (footnotes) ներկայացվում են տվյալ էջի ստորին հատվածում, 10 տառաչափով:

Է. Հոդվածի բնագրին հաջորդում է օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկը՝ նորմատիվ իրավական ակտերի ընդունման, ուժի մեջ մտնելու ամսաթվերի, սկզբնաղբյուրի մատնանշմամբ, ըստ իրավաբանական ուժի, ապա ներկայացվում են հայոց լեզվով, ապա ռուսերենով, անգլերենով կամ այլ օտար լեզվով ուսումնասիրված աշխատությունները՝ նշելով հեղինակի (հեղինակների) ազգանունը (ազգանունները) և անվան և հայրանվան սկզբնատառերը, աշխատության լրիվ անվանումը, հրատարակման վայրը, տարեթիվը, հրատարակչությունը, գիտական հոդվածի դեպքում՝ հեղինակի (հեղինակների) ազգանունը (ազգանունները) և անվան և հայրանվան սկզբնատառերը, հոդվածի լրիվ անվանումը (առկայության դեպքում՝ DOI), ժողովածուի անվանումը, թողարկման համարը, տարեթիվը, համապատասխան էջերի ընդհանուր քանակը:

Ը. Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկին հաջորդում են հոդվածի ռուսերենով, ապա անգլերենով վերնագիրը և ամփոփագրերը, ապա նաև հիմնաբառերը՝ սույն կետի դ/ ենթակետի պահանջների պահպանմամբ: